ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՔԱՌՅԱԿՆԵՐԸ

ՄԱՐԳԱՐԻՏ ՄԵԼԻՔՅԱՆ

Սովետահայ անվանի գրող Դ. Դեմիրճյանի գրական ժառանգությունը կարևոր տեղ է գրավում հայ ժողովրդի հոգևոր մշակույթի գանձարանում։ Նա գրական ասպարեզ է իջել անցյալ դարի վերջերին՝ քնարական բանաստեղծություններով։ Բարդ է նրա ստեղծագործական անհատականությունը։ Ղ. Աղայանին, Հ. Թումանյանին, Ա. Իսահակյանին, Վ. Տերյանին ժամանակակից Դ. Դեմիրճյանն աչքի էր ընկնում իր ինքնատիպ գեղարվեստական մտածողությամբ և փիլիսոփայական մտորումներով։

Հաղթահարելով վաղ շրջանի ստեղծագործություններին բնորոշ միայնության, հուսահատության տրամադրությունները, որ թելադրված էր ժամանակի մռայլ ու ողբերգական իրադարձություններով, Դ. Դեմիրճյանն իր բանաստեղծություններում աշխատեց որոնել ու գտնել կյանքում գոյություն ունեցող չարիքի արմատները, գեղեցկության ու ներդաշնակության ներքին հակասությունները։

Դ. Դեմիրճյանի պոեզիայի հիմնական մոտիվը սերն է։ Մերժված, անպատասխան սիրո հետևանքով ապրած հոռետեսությունը, սիրո վշտի, մորմոքի տրամադրությունները նրա քնարական բանաստեղծությունների էական կողմերն են։

1899 թ. լույս տեսավ Դ. Դեմիրճյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն, որտեղ դրսևորված են կյանքի երևույթներն ընդհանրացնելու բանաստեղծի ակնառու կարողությունները, նրա միամիտ ներշնչանքները, դժգոհությունը իրականությունից։ Շատ տարիներ անց, վերհիշելով Դ. Դեմիրճյանի առաջին քերթվածների առաջ բերած արձագանքները, Ա. Իսահակյանը գրել է. «1895 թ. ամառը արտասահմանից նոր վերադարձած օրերիս հանդիպեցի առաջին անգամ «Տարազ» և «Մուրճ» գրական հանդեսներում Դերենիկի անդրանիկ բանաստեղծություններին։ Շատ հաճելի թվացին նրանք ինձ. ներդաշնակում էին իմ ներքին ապրումներին։ Պատանի հեղինակի լիրիկական վիշտը անպատասխան սիրո ռոմանտիկական բայրոնական թախիծը, մենության երազանքները և դժգոհությունը տգեղ իրականությունից— այդ ամենը եղբայրացնում էին ինձ նրա հետ»[1]։

Հետագայում մատնակցելով «Վերնատան» հավաքույթներին, ծանոթանալով ռուս և եվրոպական դասականների ստեղծագործական փորձին, Դ. Դեմիրճյանը հաղթահարեց բանաստեղծության կամերային սահմանները, մոտեցավ ժողովրդայնության ակունքներին։ «Վերնատունականների» այն ժամանակվա հավաքների մասին Դ. Դեմիրճյանը գրել է. «Թումանյանի և Իսա-

---

[1] *«Գրական թերթ», 20. IV. 1945։*

հակյանի մոտ ուղղակի ձգտում կար գնալ ժողովրդական ստեղծագործությունների ուղիով, Աղայանը արդեն այդտեղից էր գալիս։ Ես նրանց միանում էի, ըստ երևույթին, շատ տարբեր, թևանցիկ շարժումներով, բայց վերջնական նպատակակետով միևնույն տեղը՝ ժողովուրդը»[2]։

Ժողովուրդը և ժողովրդականը սկսեց աստիճանաբար հիմնավոր ու լայն տեղ գրավել Դ. Դեմիրճյանի բանաստեղծական ներշնչանքներում։ Նրա ստեղծագործության հիմնական գաղափարը դարձավ ժողովրդի ազատատենչ ոգու պանծացումը։ Եվ զարմանալի չէ, որ դեռևս 1905 թ. նա ստեղծեց «Հերոսի երգը» բանաստեղծությունը.

Իր ճին խմբի հետ նստած տանիֆում՝
Երգում է հերոսն ու սագին զարկում.
Երգում է, հիշում կռիվներն անցած,
Օրեր դարաշաշ, բայց և փառապանծ։

. . . . . .

Եվ անա գվարթ այն երգը երգեց,
Որ ժողովուրդը նրան նվիրեց,
Նվիրեց նրան մի օր օրհասի
Եվ գովեց սիրած անունն հերոսի[3]։

Դ. Դեմիրճյանի յուրահատուկ ոճը, խոհերն ու ապրումները, գեղարվեստական խոսքի պաթոսը արտահայտվեցին դարասկզբին դրած նրա բանաստեղծություններում, պոեմներում, առանձնապես քառյակներում, որոնք գալիս են ավելի ամբողջացնելու Դեմիրճյան գեղագետի ստեղծագործական դեմքը։

1920 թ. Թիֆլիսում լույս տեսավ Դ. Դեմիրճյանի «Գարուն» խորագրով քառյակների ժողովածուն, որտեղ արտացոլված են կյանքի բարդ ու բազմազան երևույթները, սիրո զգացմունքի անմահությունը։ Բանաստեղծի քառյակները, որ համակված են քնարական ջերմ շնչով, արտահայտում են խորիմաստ լավատեսական աշխարհազգացում, նախկինում ապրած հիասթափությունից՝ պեսիմիզմից ազատ զգացումներ ու տրամադրություններ, որոնք նրան տարան դեպի կյանքի կենսահաստատ դիրքերը։ Քառյակները հանդիսացել են Դ. Դեմիրճյանի ստեղծագործական մտահղացման ուշագրավ մի փուլը, որ բխում է բանաստեղծի անհատականությունից։ Նրանք հիմնականում գրված են երկու տասնամյակի ընթացքում (1902—1919 թթ.) և իրենց բովանդակությամբ տարբեր բնույթի են՝ վհատության տխուր խոհերից մինչև խնդուն, պաթետիկ կամ հուզական անմիջականությամբ շաղախված վերապրումը, սիրո զգացմունքի, քնքշության զգայացունց պատկերները։

Ժողովածուն սկսվում է գարնան և սիրո օրհներգություններով պարուրված գարունն ավետող մի շարք քառյակներով, դուցե այդ պատճառով էլ այն կրում է «Գարուն» խորագիրը։

---

2 «Բանվոր», 15. IX. 1939։

3 Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1976, էջ 52—53 (բանաստեղծության խորագիրը տե՛ս ԳԱԹ, Դ. Դեմիրճյանի ֆոնդ, № 2264)։

Ինչքան ծիլ ծաղիկնե՛ր ծնվեցին այս գիշեր,
Ինչքան վառ ծաղիկնե՛ր զարթեցին այս գիշեր,
Ինչքան թարմ դոնակնե՛ր բացվեցին այս գիշեր,
Դուրս ելան շուշաննե՛ր, անուշնե՛ր, մեղույշնե՛ր:
Ինչքան զի՛լ որոտաց սիրո ձայնն այս գիշեր,—
Մի ձայնն էլ ի՛նձ հասավ... աչքս բա՛ց այս գիշեր...[4]

Կարո՞ղ է լսել մարդ գարնան ճեքն առաջին.
Ո՞վ լսի նրա մե՛ղմ ծլելը առաջին.[5]

Վերոհիշյալ քառյակի այլ տարբերակներում ևս, սիրո կրքոտ խոստովանությունը հնչում է որպես կյանքի երջանկության փառաբանություն։ Սակայն գարունը բանաստեղծի համար բերել է նաև տխրություն.

Ո՞վ պիտի ունկ դնի սրտիս լո՛ւռ ճառաչին
Քեզնի՛ց զատ, որ միա՛յն լսում ես ու լռում[6]:

Քառյակներում չափազանց արտահայտիչ են բանաստեղծի տառապանքի, անպատասխան սիրո տվայտանքների, հոգու բզկտման, ներանձնական լուռ ցավի տեսարանները։ Դ. Դեմիրճյանի սիրո զգացմունքներն անկեղծ են, կրքոտ, լի լարվածությամբ։ Այս թեման ծավալվում է միջնադարյան հայ տաղերգուների՝ Նաղաշ Հովնաթանի, Քուչակի, Սայաթ-Նովայի սիրերգության ավանդների խոր ու վարպետ օգտագործմամբ։ Նաղաշի տաղերի հանդեպ Դ. Դեմիրճյանի հետաքրքրությունը բացատրվում է դարասկզբին ծայր առած «վերադարձի» հոգեբանությամբ դեպի ուշ միջնադարի հայ քերթողները։ Իսկ Նաղաշ Հովնաթանը միջնադարի այն աշխարհիկ բանաստեղծներից է, որն աչքի է ընկնում իր կենսասիրությամբ, զվարթամիտ և առույգ հումորով. իր քառյակներից մեկում դիմելով Նաղաշ Հովնաթանին՝ Դ. Դեմիրճյանն ասում է.

Մեկ ներմակ վարդ ասավ, Նաղա՛շ, ճիվանդ եմ.
Գնամ պառկեմ, վախե՛մ հոգիս ավանգեմ,
Ասի՝ հոգի՛, հոգի՛ս կտամ, չըմեռնես.
Ասավ՝ էդ մե՛կ խոսքդ էլ ըսվ է՝ ապրեմ ես[7]:

Սակայն հետզհետե բանաստեղծի համար կյանքը դառնանում է, հուսահատությունը կախվում է օդում։ Այդ տրամադրությամբ նա փորձում է ընկնել մոռացության գիրկը, գինու մեջ խեղդել վիշտն ու թախիծը։ Կյանքի անցողիկությունը տխուր զգացումներով է համակում բանաստեղծի հոգին.

Կյանքն է հոդե դատարկ չինի.
Կուզես թո՛ւյն լից, կուզես՝ գինի՛.

---

4 Դ ե ր ե ն ի կ Դ ե մ ի ր ճ յ ա ն, Գարուն, Թիֆլիս, 1920, էջ Բ։
5 Նույն տեղում, էջ Գ։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում, էջ ԿԴ։

Սի՛րտ իմ, ժուժկալ մի՛ լինի զուր,—
Լի՜ց, զո՛նն ես դու մեկնումինի[8]:

Երբեմն էլ բանաստեղծը խոստովանում է, որ եթե իր ճամփին հանդիպի սիրած աղջկան ծաղիկներով ու ծիծաղով և նա իրեն շնորհի կենսուրախ երդեր, ապա կփարատի իր վիշտը.

Դեմս եկար գարնան նման ծաղիկներո՜վ, կրակելո՜վ,
Ալ ու կրակ շողշողալո՜վ, շող ու շախո՜վ,
Թիթեռի պես ծիծաղելո՜վ, սգվոր սիրտս բաց անելո՜վ
Սիրտս բացիր նո՛ր երդերով, նո՛ր գինիով, նոր վարդերով[9]:

Տրամադրության որոշ պահերին նա կոչ է անում վայելել կյանքը, ուրախությունը, գինին, որովհետև ժամանակն անցնում է.

Այգու դռան կանգնել էր մեկն ու գիլ կանչում գավը բռնած.
Ի՞նչ բանի եք, գժե՜ր, եկե՜ք, կյանքը գնա՜ց, գինին մնա՜ց...[10]

Քառյակներից մեկ ուրիշում առկա է զգացմունքների պարզ, արևոտ կենսախնդությունը։ Հեղինակը հեռացել է մշուշից, տենչում է լուսավոր հորիզոններ, և նրա սիրո առարկան երազային է.

Դու շուշա՜ն լուսընկա, դու ծովի՜կ շողշողուն,
Դու ճեքիա՜թ նարավի, դու աստղիկ փողփողուն,
Դու ալիք կարկաչո՜ւն, դո՛ւ ճեռուն, դու ճեռվո՜ւմ,
Երբ քեզ եմ գալիս ես՝ դու ճալչում, երազվո՜ւմ[11]:

Քառյակներում պարզ ուրվագծվում են ժամանակի մասին Դ. Դեմիրճյանի փիլիսոփայական մտորումները.

Ի՜մ ոսկե դու գինի, ի՜մ գինի ծիրանի,
Կըմեռնեմ, կըլնեմ կա՜վ, որ քեզ միշտ դառնամ գա՜վ[12]:

Մտերմուհու, սիրած էակի պաշտամունքը իր արտահայտությունն է գտել ժողովածուի մի շարք քառյակներում։ Բանաստեղծի համար կյանքում մի բան միայն գոյություն ունի՝ սեր և վայելումի բուռն զգացում, ուստի, սիրած էակի գովերգումը նա հասցնում է պաշտամունքի.

Էդ մանրիկ ոտքերն որ ունես՝ առաքինի՜ ես, սուրբ ե՜ս...
Էդ նազուկ մատներն որ ունես՝ դու բարեպա՜շտ ես, սո՜ւրբ ես...
Էդ դրախտի ճասակդ որ ունես՝ դու առաքյա՜լ ես, սո՜ւրբ ես...
Չկա՜ քեզնից վեր մի ինչ, չե՜մ ուզում քեզնից վեր ոչինչ[13]:

---

8 Նույն տեղում, էջ ԼԲ։
9 Նույն տեղում, էջ ԼԴ։
10 Նույն տեղում, էջ ԼԴ։
11 Նույն տեղում, էջ ԻԼ։
12 Նույն տեղում, էջ ԽԵ։
13 Նույն տեղում, էջ ԽԱ։

Բանաստեղծը մեծարում է գեղեցկությունը, որը դարձյալ գալիս է սիրո պաշտամունքից.

Թե գեղեցիկին ղու չգովես՝ կա՞ մեկ ճանցանք դրանից վեր.
Թե գովիցդ էլ կրակն ընկնես՝ կա՞ սեկ պատիժ դրանից վեր...[14]

Աստիճանաբար խախտվում է բանաստեղծի սիրո զգացմունքների հավասարակշռությունը. տարվելով սիրով՝ նա փնտրում է մարմնական վայելք և ձգտում է ներանձնանալ ամենանվիրականի, խորապես մտերմականի հետ, պաշտել ու լիապես վայելել սիրած էակին.

Տխո՞ւր եմ, ջա՞ն, մի վա՛ղդ ղրկիր՝ ուրախանա՞մ.
Վաղդի ճետն էլ մի ճամբո՛ւյր դիր՝ զվարթանա՞մ.
Ամեն թերթում մե՞կ ճամբույր դիր՝ թող լիանա՞մ.
Ի՞նիդ արի... Ոտներդ ընկնեմ, երջանկանա՞մ[15]:

Բայց սիրահարը մերժվում է, սկսվում է նրա հոգեկան դրաման, փոթորկվում, թունավորվում է բանաստեղծի կյանքը.

Չե՞մ տեսնում, չե՞մ տեսնում, չե՞մ տեսնում քեզ մի օր,
Չե՞մ տեսնում ոչ մի մարդ ինձ նման դժվարում...[16]

Մի այլ առիթով սիրածի կորուստը նրան խորհել է տալիս.

Դո՞ւ, որ իմ ձեռից կորար՝ ի՞մ անձն էլ կորչել պիտեր,
Գոնարն էնդուր է միշտ կորչում, որ է անգի՞ն, որ ունի տե՞ր[17]:

Եվ անելանելի հոգեկան սուր կսկիծը խորանում, վհատություն է պատճառում նրան.

Այդ քո ծավ աչքերիդ ինչքա՞ն եմ կարոտել,
Այդ անգութ ճեռու տեղդ ինչքա՞ն եմ ես ատել...[18]

Քառյակների հետագա շարքում հեղինակը դառնորեն ողբում է սիրած էակի կորուստը, նախատում է նրան, որ իր միակ սերն այժմ ուրիշի գրկումն է և հուսահատված այն համարում է «գարունքի քաղցր սխալ»։ Հետագայում սերը բանաստեղծի համար հետզհետե օտարանում է, դառնում ցնորք, երազ, սիրո խոստովանությունը զուգորդվում հոգու խիստ լարված վիճակի հետ.

Էլ ինչո՞վ ապրեմ ես առանց քեզ, մենավո՞ր,
Երբ քեզնից չունիմ ճույս, ի՞մ երազ ճեռավոր.
Ա՞յս էր քո խոստումը երազում ինձ տված,
Ի՞մ գարնան որոնած, ի՞մ աշնան գտնված...[19]

---

14 Նույն տեղում, էջ ԽԳ։
15 Նույն տեղում, էջ ԾԱ։
16 Նույն տեղում, էջ ԻԱ։
17 Նույն տեղում, էջ ԺԹ։
18 Նույն տեղում, էջ ԻԲ։
19 Նույն տեղում, էջ ԺԶ։

«Դարնանը որոնածին՝ աշնանը չգտնելու» հույսը վերածվում է ունայնության և նա հաշտվում է ստեղծված վիճակի հետ, բավարարվելով լոկ սիրած էակի հեռավոր գոյությամբ.

Ի՛մն ես, թե իմը չես դու՝ էլի՞ եմ, ջա՛ն, էլի՞ ուրախ.
Քանի որ աշխարհում դու կաս՝ ինձ համար մա՞հն էլ է ուրախ.[20]

Դ. Դեմիրճյանի սիրո քառյակներն օրգանական ամբողջություն են կազմում և առանձին-առանձին վերցրած ներկայացնում միևնույն զգացումների և ապրումների տարաբնույթ արտահայտությունները։ Կյանքի անցողիկության գաղափարը ամենուրեք պայմանավորում է սիրո վայելքի հրամայական անհրաժեշտությունը։ Դ. Դեմիրճյանը արևելյան բանաստեղծներից քաղում է հայտնի, բայց խորապես մարդկային պատկերացումը սիրո ու վայելումի անցողիկության վերաբերյալ.

Մի՛ լար, մի՛ թացիր աչքերդ. աչքիդ լույսն ափսո՛ս է, կանցնի՞.
Մի՛ տխրիր, նոր գարուն հասակդ մի օր է վառ մայիս, կանցնի՞...[21]

Բանաստեղծը խորհում է իմաստալից մի խորհուրդ և հաշտվում է իր կրած ապրումների և հոգու մրրիկների հետ.

Աշխարհն էլ հեքիաթ է էսպես, մի՛ շտապիր, կբնատնի, կանցնի՞[22]։

Այսպես աստիճանաբար շրջափոխվում է Դ. Դեմիրճյանի քառյակների բովանդակությունը։ 1912 թ. հետո գրած իր քառյակներում բանաստեղծը կյանքին նայում է այլ կերպ, դառնում ավելի ներհուն, լուսկյաց։ Կորցրած սերը թեև կսկիծ է պատճառում, սակայն նա չի դադարում սիրելուց։ Վերջին քառյակներից մեկում Դ. Դեմիրճյանն ավելի լայնախոհ է և փիլիսոփայական հանդարտությամբ բացականչում է.

Դու լա՛վն արա, վերջը էլի՞ լավությունից լավ բան չըկա.
Դու չա՛վն արա, որ չըմնա՝ լավությունը պիտի մնա...[23]

Բանաստեղծը որքան էլ մտորում է, չի կարողանում հասկանալ կյանքի և տիեզերքի կապի ու միասնության գաղտնիքը։ Նրա համար պարզ չէ, թե ինչու աշխարհը հավերժական է ու անփոփոխ.

Թե Աստված աշխարհն էսպես է սարքել՝
Իմ խելքս էլ ի՞նչ.
Թե մի շյուղն անգամ չի ուզում շտկել՝
Իմ ասելս էլ ի՞նչ.

---

20 Նույն տեղում, էջ ԾԶ։
21 Նույն տեղում, էջ Հ։
22 Նույն տեղում։
23 Նույն տեղում, էջ ՀԵ։

Թե աշխարհ գայս. աշխարհից զնալս՝
Իմ կամքով չէ՛ր իսկ՝
Ուզել չուզե՞լս ինչ. ե՞ս ինչ, աշխա՞րհն ինչ[24]:

Բերված քառյակից ակներև է, որ իմացության թախիծը բանաստեղծին մղում է տիեզերքի հեռուներում փնտրելու փրկության միջոցներ։

Դ. Դեմիրճյանի քառյակներում գրսևորվել է բանաստեղծի լեզվի կուլտուրան, հուզական պատկերավոր, աշխույժ խոսքը։ Նրա քառյակների բնորոշ առանձնահատկությունը՝ իրականության փիլիսոփայական իմաստավորումն է, լավատեսությունը, անձնական երջանկության կարևորությունը, լուսաշող հավատը կյանքի նկատմամբ։

Անվանի Կոմպոզիտոր Ռ. Մելիքյանը 1917—1918 թթ. ստեղծեց (մենեղեր գաշնակահարի համար) իր հանրահայտ «Զմրուխտի» շարքը[25], որտեղ ի թիվս այլ քնարական երգերի, ընդգրկվեց նաև Դ. Դեմիրճյանի «Մի՛ լար, մի՛ թացիր աչքերդ...» քառյակը։ Ժողովրդական մեղեդայնությամբ գրված երաժշտությունը միանգամայն համապատասխանում է բանաստեղծական խոսքին, ընդգծում նրա քնարականությունը և դրամատիզմը։

Քառյակները Դ. Դեմիրճյանին հետաքրքրել են նրա կյանքի տարբեր տարիներին։ «Գարուն» տաղարանին նա վերստին անդրադարձել է 1955 թ., այդ շարքին ավելացնելով քսանի հասնող նոր քառյակներ՝ հավանաբար վերահրատարակելու նպատակով։

Քառյակների գերակշռող մասը ձևի և բովանդակության հստականիշներով նման է Արևելքին բնորոշ ռուբայի բանաստեղծական ձևին, իսկ որոշ մասն էլ գրված է յամբ անապեսային տասվանկանի ոտանավորով։ Կան քառյակներ, որոնց բոլոր տողերը նույնահանգ են։ Դ. Դեմիրճյանը հատուկ ուշադրություն է դարձրել շեշտերի ճշտության, ռիթմի ու երաժշտականության վրա։ Քառյակները աչքի են ընկնում նաև հարուստ պատկերներով և գունային վառ երանգավորումներով։ Որոշ դեպքերում էլ Դ. Դեմիրճյանը խախտել է քառյակի սահմանված չորս տողը և դարձրել վեց տող, որոշ քառյակներ ստեղծել է բնաբանով։

Իրենց բարձր գեղարվեստական արժանիքներով, ներգործուն աղդեցությամբ և ինքնատիպությամբ, Դ. Դեմիրճյանի քառյակները հայ քնարերգության լավագույն էջերից են։

ЧЕТВЕРОСТИШИЯ ДЕРЕНИКА ДЕМИРЧЯНА

МАРГАРИТ МЕЛИКЯН

Резюме

Выдающийся армянский советский писатель Д. Демирчян вступил на стезю литературной деятельности своими лирическими произведениями.

Главный мотив его поэзии—любовь. Его особый стиль, думы и переживания, пафос художественного слова отразились в лирическом жанре, особенно в четверостишиях.

24 Նույն տեղում, էջ 26։

25 Ռոմանոս Մելիքյան. Զմրուխտի. Մոսկվա, 1928։